ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 83 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012թ. սեպտեմբերի 2-ի <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35- Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին> N 821- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին> N 35-Ա որոշման <(70) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմ> բաժնում /այսուհետ Բաժին/ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

< Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Բերդի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 70-4.1-30>.

2) ուժը կորցրած ճանաչել Բաժնի <4.3> ենթաբաժնի 5-րդ կետը.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. սեպտեմբերի 24
ք.Իջևան